Ernst Lindner

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ

1. ԺՈՒՇԿԻՆ ԳԵՆԵՐԱԼ

Ժամանակոց կէղնի մի վաճառական, կունենա էրկու հատ էրեխա՝ մեկ տղա, մեկ աղջիկ։

Վաճառականը եվ օր կէխտիարնա, իրան մեռնելը գըզգա, օր թե ինքը պետք է անպատճառ մեռնի, կանչե կը տղին, կըսե.

— Տղա, ես մեռնելու եմ. քեզի վրա պարտք կդնեմ, որ իմ մեռնելեն ետև առաջ քուրոշըդ կը կարքես, ետև դու կը կարքըվիս։ Հըմը իմ ըսած խոսքերըս միտքըդ պայես, մտան չէնես, քեզի գեշ կէղնի, դու կը փոշմընիս։

Ըսելեն մե քանիմ օր ետև հերը կը մեռնի, տղեն ու աղջիկը կը մնան եթում։ Եթում մնալեն ետև, էրկու-իրեք ամիս ետև տղեն գնաց քաղքի մեջ ման գալու, տեսավ մե սիրուն աղջիկըմ, օր ըտման սիրուն աղջիկ հեչ մե տեղըմ չէր ճարվի։ Աղջիկն էլ տղին օր տեսավ, տղին հավնավ, մոտեցավ էնոր ըսավ.— Ես էս քաղքի մեջը ման գալով քեզի հավնա։ Մենք պըտի իրար առնենք, ապրենք։

Տղեն ըսավ,— Հերըս ընձի օսյաթ է էրե, որ առեջ քուրոջըս կարքեմ, ետև ես կարքըվիմ։

Շատ քցեցին, քիչ քցեցին, վերջը տղեն չ՝կրցավ յախեն աղջկանեն աղատել։ Վերջապես տղեն առավ աղջկան, բերավ տուն։

Մե էրկօրըմ ետև ըդոնց մայլեն դողութուն իճաթ էղավ։ Մե քանիմ օրից ետև ըսին. «Էս դողությունը ձեր տունը գուքա»։

Քուր ու աղպեր խոսացին էդ բանի վրա, խելքերը բան չը

հասավ։ Վերջը ախչիկը շատ մտածելով մե գիշեր չը քնավ։ Կես գիշերին մեկ էլ տեսավ՝ օր հարսը ախպոր ծոցեն ելա՛վ, դառավ մե սև շունըմ ու տնեն դուս ելավ։ Քուրը ետևեն աշեց, տեսավ օր շունը գնա՛ց, մտավ դրացու տունը, մի էրկու-իրեք սահաթ ետև նորեն ետ դառավ էկա՛վ. փոխեց իրեն լաղապը, դառավ հարս, գնաց մտավ ախպոր ծոցը։

Սապախտան ելան, դրկիցները է՛լի ըսեցին. «Մեր տները գող է մտե, մեզի թալլել տարել է»։

Քուրը կանչեց ախպորը, ըսավ.— Ախպեր, դուն ե՞ս, հերթիքն ե՞ս, մեր հարսը հարս չէ։ Լաղապը փոխե դառնա կը շուն, մըտնի կը դըրկիցներու տունը, քո՞ւլլի կուտե, դուքա տուն, մըտնի կը ծոցը դ։

Ախպերն ըսավ.— Օղո՞րթ կըսես։

— Սուտ ըսելու ի՞նչ ունիմ, ախպեր։ Էս գիշեր դու զարթուն մնա, կը տեսնիս օր օղորթ է, էն վախտը դիմանաս։

Տղեն գիշերը չը քնավ. տեսավ օր ահա՛ կընիկը ելա՛վ, գնաց դեպի դուռը։ Տղեն տեղեն ելավ. ետևեն գնաց դուս, տեսավ օր կնիկը իրան լաղապը փոխեց, դառավ մի փուչոտ շուն, գնաց մտավ դրկցի տունը։ Տղեն էնքան դուռը աշեց, մինչև օր դրկցի տնեն դուս ելավ։ Էկավ ինքը մտավ տեղը, սուտ քնեց։ Տեսավ օր կնիկն էկավ, կնիկ դառավ, մտավ ծոցը։

Էդ օրը սապախտան ելան, քուր ու ախպեր գողտու խոսացին, թե. «Ա՛յ շանըմ, էս մեր հալը ի՞նչըդ պիտի էղնի»։

Տղեն քուրոջն ըսեց.— Ըսօր մե աղի ապուրըմ էփե, տան մեշն էլ հեչ ջուր չես թողնի, կուժըմ ջուր կը լցնես, կը կախես օդի առիքեն. էն վախտը տեսնինք, թե ի՞նչ կէղնի մեր հարսը։

Քուրը ապուրն էփեց, էկավ ուտելու վախտը։

Հարսը տուն էկավ, բերին ապուրը կերան, ելան պառկան։ Գիշեր էր անցե։ Էնոնք սուտ քուն էին էրե։ Մեկ էլ տեսան օր հարսը տեղեն ելավ, հ՞օդի մեջը ման էկավ, ջուր չը գտավ օր խմեր։ Համփերութունը կտռավ, տեսավ օր առիքեն կուժը կախած է. իրան լաղապը փոխեց, դառավ մե սև օցըմ, ելավ առիքը, գլոխը կախեց կժի մեջը, ջուրը ծծեց ու իշավ ցած, էղավ հարս։

Մարթը, դե տղամարթ էր, համփերութուն չունեցավ թեզըմ կնկան ըսավ.— Կնիկ, էդ ի՞նչ բան է դու կէնէս։

Կնիկն ըսավ,— Մարթ, դու իմ էրածները տեսա՞ր։

— Հա՛,— ըսավ,— տեսա։

— Օր տեսար, լավ, տեսնելը քիչըմ ետև տես,— ըսավ ու ելավ

բերավ մե փետրմ, զարկեց մարթուն, ըսավ.— Դառնաս մե սև զաղար[1]։ Մարթը էդ վախտը դառավ սև զաղարըմ, ընկավ գեղի մեշ։ Գեղի շները տեսան, ըսկըսեցին խեխտել։ Շատ օր չարչըրեցին, զաղարը տեսավ օր իրան պըտի խեխտեն, գլոխն առավ ու քաղքեն դուս գնաց։ Դուս էրթըլեն ետև բռնեց մե ճամփա ու գնաց։ Գնա՜ց, գնա՜ց, շատ էր գնացե, թե քիչ, հասավ մե չոբնիմ քով։ Չորնի շները հասան օր զաղրին դզեին, զաղարը, ախըր ինսան էր, գնաց ընկավ չոբնի գիրկը։ Չոբանը զաղարին փրկեց ու տարավ իրան մոտը, քիչ-քիչ շներուն սորվեցուց վրեն։

Ետից ետև զաղարը դառավ չոբնի աչքի լուսը։ Ախըր զաղարը ինսան էր, կհասկընար՝ օչխարը ուրման կէրթար, թեզ-թեզ թուփ կէներ իրար վրա։ Գիշերները չորանը դինչ կքնիր, զաղարը անվնաս կպահեր օչխարը։

Չոբանը տեսնելով զաղարի էրածը, ըսավ. «Այ մարթ, էս գաղարն օր կա, ես էլ շունը ի՞նչ պըտի էնեմ»։ Շներուն հեռեցըրավ ու պայեց զաղարին։ Ետից ետև չորանը ինչ օր կըսեր՝ զաղարը կը կատարեր։

Անցավ մե վախտ, մեկ էլ տեսան՝ դարվեշի ղըլըղով էրկու մարթ էկան չոբնի քովը, բարև տվին, բարով առան, նստան։ Ըդոնք օր նստան, չոբանը կանչեց զաղարին, ըսավ.— Զաղար, գնա թուխ օչխարը բռնե, կթենք։

Զաղարը գնաց, էն սահաթին թուխ օչխարը բռնեց. կթեցին։ Ըդման մե քանի օչխարի անուն տալով՝ կթեցին, պրծան. դարվեշը տեսավ օր էսի զաղրի բան չէ, ըսավ.— Չոբան, էս զաղարը տուր ընձի։

Չոբանն ըսավ.— Հոգիս ուզես կուտամ, զաղարը չեմ տա։

Դարվեշը ի՞նչ էրավ, չէրավ, վերշը զաղարը տարավ։ Զաղարը տարավ հասցըրեց իրան տեղը, դարվեշի ղըլըղը փոխեց, դառավ թագավոր։ Ետից ետև զաղարին կանչեց քովը, ի՞նչ օր կըսեր, էն էլ ինսընի պես կկատարեր։ Թագավորը տեսավ օր էս ուրիշ բան է, ըսկըսեց զաղարին լավ պայել։

Թագավորին էրեխա չէր մընա. էղած վախտը էրեխեն կորիր կը. վով կը տանիր՝ մարթ չիտեր։ Էղավ օր թագավորի կնիկը մնաց էրկու հոգով։ Ազատվելու վախտը խապար տվին թագավորին, թե ի՛նչ կէնես օր կնիկդ կազատվի։ Թագավորը զաղարին ղրկեց կնկա քովը։ Կնիկը օր տեսավ քովինը զաղարն է, չիտեր ինչ էներ. «էնքան արժան չեմ մարթու, օր իմ մարթս քովըս զաղարը ճամփեց»։

Էկավ կնկա ազատվելու վախտը։ Էրեխեն օր մորեն բաժան-

[1] Շուն (Ծ. Բ.)։

վավ, զաղարը տեսավ, օր վիշապը էրկնքեն փոթորկի պես էկա՞վ, իշավ էրթըքեն կնկա քովը, ուզեց օր էրեխին կուլ տար։ Զաղարն օր տեսավ, ըսկըսեց վիշապի հետ կռվել։ Շատ օր իրար հետ կռվան, չարչըրվան, մեկը մեկին արընի մեշ կորուց, վերշը զաղարը վիշապին ախտեց, առավ էրեխեն իրան թաթերին. վիշապը հախտվավ, թողեց փախավ։ Զաղարը էրեխին տարավ թագավորի քովը։ Թագավորն օր տեսավ շատ խնդացավ, կնկա քովը մարթ ղրկեց իմանալու, թե էս ի՞նչ պատմություն է։ Կնիկը ուշքի էկավ, պատմեց, թե ըսմա՞ն ըսմա՞ն բան։ Թագավորը կանչեց զաղարին ու սինոթ թուփ էրավ, ըսավ.— Աղա, լալա, վազիրնե՛ր, դուք գիտեք օր իմ կնկանս էրեխա չէր մընա։ Էս զաղարը էս անգամվա էրեխեն ազատեց վիշապի ձեռքեն։

Թագավորը ըսավ ու էդ վախտը հանեց իրեն շլնքի լենթը, քցեց զաղարի շլինքըն ու ըսավ.— Ըստից ետև մեր զազրի անունը կը մնա Ժուշկին Գեներալ։

Անունը Ժուշկին Գեներալ դնելեն ետև էնոր հանձնեց էրկու հավատարիմ մարթու, ըսեց.— Էս զաղարին լավ կը պայեք, խնամեք, լողացնեք, օր լավ չը պայեք կը պատժենք։

Մե քանի վախտ անցնելեն ետև էդ էրկու մարթը նախանձվան, թե մենք ըսման մարթ էղնինք ու շանը ծառայենք։— Արի,— ըսին,— էս զաղարը տանինք կորցնենք։

Ելավ Ժուշկին Գեներալին առան, տարան ցուրը քցին, գնաց կորավ։ Շատ գնաց թե քիչ, օրվան մեկը հասավ մե ախպըրի։ Թող էնիկ մնա ախպըրի մոտ, մենք խապարը տանք թագավորեն։

Թագավորը կանչեց էրկու մարթուն ըսավ.— Ժուշկի Գեներալն ինչը՞ղ է։

Ըսին.— Թագավորը ապրած, Ժուշկի Գեներալը կորել է։

— Ի՞նչըղ թե կորել է։

— Կորել է, թագավորն ապրած։

Թագավորը վերուց էդ էրկուսին էլ գրավ դոտմեն։ Կանչեց մե քանիմ հոքու, ըսավ.

— Քաղքեն դուս կէրթաք էսինչ էսինչ տեղը մե ղայֆախանեմ կը բանաք, գալող էրթողին կը հարցնեք. «Ըսման զաղարըմ, չե՞ք տեսեք», ով օր ըսավ «տեսել եմ», բռնեք, բերեք իմ քովը։

Ղայֆախանեն շինեցին։ Շատ մարթիք էկան գնացին, հե՛չ մեկը խապար չը տվին։

Հիմի մենք դառնանք զաղարին, տեսնինք ի՞նչ էղավ։

Զաղարը ախպրի քով պառկելեն ետև, ցորեկվան շոքն օր զո-

ռեց, տեսավ օր էրկու հատ աղունիկ թռա՜ն, էկան իշան ախպրի քովը, հանեցին իրանց ըմբրուվները, դառան էրկու հատ հրեղեն ախչիկ, մտան ջուրը լողնալու։ Լողցած վախտը ախչկներեն մեկը ըսավ.

— Քո՛ւր, ըստեղ մե զաղարըմ կա պառկած, թե օր զարթուն էղնի, մենք օր ելանք ջրեն, գնացինք, ինքը մտնի էս ախպուրը լողնա, կը դառնա էն առաջվա լավ տղեն։

Ախչկների լիզուն զաղարը հասկըցավ, ըսավ. «Տեր աստված, էս խոսքը օղո՞րթ է, թե, սուտ է»։

Սուտ թե օղորթ, զաղարը մտավ ջուրը, լողցավ, առաջվա պես դառցավ ջահել տղա։ Օր տղա դառցավ, մտածեց, թե էս ի՞նչ բան էղավ։ Ընկավ ճամփա, էկավ հասավ իրեն չոբնին։ Չոբնին ըսեց իրեն գլխուն էկած բաները։ Չոբանը հասկըցավ, օր էս մարթը իրեն զաղարն է էղել։ Քանիմ վախտ պահեց, ըսավ.— Մնա իմ քովը։

Տղեն չմնաց, ելավ գնաց։ Գնա՜ց, գնա՜ց, հասավ էն թագավորի քաղաքը, որտեղ օր ինքը թագավորին ծառայել էր։ Գնաց մտավ ղայֆախանեն, մե զայֆեմ ուզեց, խմեց, պրծավ, ղայֆախանի ծառայողը էկավ տղի քովը, հարցրավ, թե.— Ըսման մե հատ զաղար չե՞ս տեսե։

Տղեն ըսավ.— Տեսել եմ ու տեղն էլ գիտեմ։

Ծառայողը գնաց թագավորի քովը, ըսավ օր.— Ես զաղարի տեղը գիտցող մարթուն գտել եմ։

Թագավորը էդ մարթուն բերել տվեց իրան քովը, հարց ու փորձ էրավ։ Տղեն պատմեց թագավորին իրան գլխի գյալաճաղը առաջից չուրի վերջը։

Թագավորը էդ տղին էրավ վազիր։ Վազիրին ետև իրավունք տավ՝ գնաց քուրոչը տեսնելու։ Գնաց տեսավ օր, ի՞նչ տեսնի, սաղ երկիրը ինսընիմ կտոր չկա, բիտտունին իրեն կնիկը կերել պըրծել էր։

Էդտից ետև ետ դառավ էկավ, թագավորի մեռնելեն ետև թախտը տվին իրեն։